

#myuefacard արշավի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

- 1.1 «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի և MasterCard-ի կողմից իրականացվում է համատեղ արշավ / այսուհետ՝ Արշավ / Բանկի MasterCard UEFA Champions League հիմնական քարտ ունեցող քարտապանների միջև / այսուհետ՝ Քարտապան/:
- 1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:
- 1.3 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:
- 1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում և www.myuefacard.am հարթակում:
- 2.2 Կազմակերպիչն իրավունք ունի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի 2.1 կետում նշված կայքում և հարթակում:
- 2.3 Արշավի շրջանակներում Պարգևատրումները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:
- 2.6 Արշավին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:
- 2.7 Մեկ անձը կարող է գրանցվել միայն մեկ անգամ:
- 2.8 Գրանցումները հաստատվում են Կազմակերպչի կողմից՝ Քարտապանների գրանցման համար նախատեսված տվյալների ստուգումից հետո: Կազմակերպիչն իրավունք ունի անվավեր ճանաչել և չդիտարկել գրանցման ներկայացված կեղծ կամ թերի դիմումները: Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել գրանցված Քարտապանների հետ և ստուգել դիմումի իսկությունը: Եթե Քարտապանը հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների և դիմումի միջև տվյալների անհամապատասխանություն կա, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

3. Մասնակցության պայմաններ

- 3.1 Արշավի մասնակցության նպատակով սույն թվականի մարտի 18-ից մինչև ապրիլի 20-ը ներառյալ անհրաժեշտ է գրանցվել www.myuefacard.am հարթակում: www.myuefacard.am հարթակը հանդիսանում է Արշավի մասնակցության համար դիմելու և գրանցվելու միակ հարթակը: Հարթակում գրանցումներն անհրաժեշտ է իրականացնել թիմով՝ յուրաքանչյուր թիմում երկու Քարտապան / այսուհետ Թիմ/:
- 3.2 Արշավին կարող են մասնակցել գործող MasterCard UEFA Champions League Քարտապանները:
- 3.3 Արշավի շրջանակներում Կազմակերպչի կողմից առաջադրանքների մեկնարկման սկիզբ է սահմանվում սույն թվականի ապրիլի 10-ը, իսկ միավորների հաշվեգրման սկիզբ՝ սույն թվականի մարտի 18-ը: Հաշվեգրված միավորները www.myuefacard.am հարթակում հասանելի են դառնալու սկսած սույն թվականի ապրիլի 10-ից: Սույն փաստաթղթի 3.6.1 ենթակետում նշված գործարքների դիմաց միավորների հաշվեգրումը և www.myuefacard.am հարթակում ցուցադրումն իրականացվելու են տվյալ գործարքների քաղվածքում ձևակերպումից հետո ոչ ուշ քան 5-րդ աշխատանքային օրը:
- 3.4 Արշավի շրջանակներում Կազմակերպչի կողմից պարբերաբար սահմանվելու են հավելյալ առաջադրանքներ և առաջադրանքների կատարման համար Թիմին/Քարտապաններին տրամադրվելու են համապատասխան միավորներ: Հավելյալ առաջադրանքները Կազմակերպչի կողմից ուղարկվելու են www.myuefacard.am հարթակին: Արշավի յուրաքանչյուր առաջադրանք հնարավորություն կտա Թիմին/Քարտապանին վաստակելու սահմանված քանակի միավորներ: Յուրաքանչյուր առաջադրանքի համար առավելագույն միավորների քանակը կսահմանվի տվյալ առաջադրանքի հայտարարման հետ մեկտեղ: Արշավի առաջադրանքների պատասխանները պետք է տրվեն բացառապես www.myuefacard.am

հարթակի միջոցով և չպետք է փոխանցվեն որևէ երրորդ կողմի, եթե կազմակերպիչն այդպիսի պահանջ չի ներկայացրել:

3.5 Արշավի որոշ առաջադրանքների կատարումը կարող է պահանջել մասնակցի/Թիմի անմիջական ներկայությունը:

3.6 Արշավի շրջանակներում միավորների հաշվարկն իրականացվելու է հետևյալ կերպ.

3.6.1 սույն թվականի ապրիլի 10-ից մինչև ապրիլի 20-ը ներառյալ յուրաքանչյուր օր 1,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավել վճարային գործարքի դիմաց հաշվարկվելու է 5 միավոր: Յուրաքանչյուր Քարտապանի համար մեկ օրվա ընթացքում առավելագույն միավոր է սահմանվել 5 միավորը և 10 միավոր՝ Թիմի համար: Վճարային գործարք է համարվում տեղական և միջազգային առևտրի սպասարկման կետերում իրականացված վճարային գործարքները, առցանց վճարային գործարքները բացառությամբ՝ կոմունալ վճարումների, էլեկտրոնային դրամապանակների միջոցով իրականացված գործարքների, քարտից քարտ փոխանցումների: Միավորների հաշվարկը կատարվելու է հիմք ընդունելով գործարքի կատարման ամսաթիվը:

3.6.2 սույն թվականի մարտի 18-ից ապրիլի 20-ը ներառյալ Արշավի շրջանակներում «հրավիրիր ընկերոջդ» ծրագրի միջոցով հրավիրող և հրավիրվող Թիմերին տրամադրվելու են 20-ական միավորներ, որի համար հրավիրվող Թիմը www.myuefacard.am հարթակում գրանցվելիս պետք է մուտքագրի հրավիրող Թիմի անվանումը:

3.6.3 Արշավի շրջանակներում Քարտապաններին/Թիմերին տրամադրվելու են նաև սույն Պայմանների և Դրույթների 3.4 կետով նախատեսված հավելյալ միավորներ:

3.7 Արշավի շրջանակներում առավելագույն միավոր հավաքած երեք Թիմերին տրամադրվելու են հետևյալ պարզևատրումները.

3.7.1 առաջին հորիզոնականը զբաղեցրած Թիմին Իսպանիայի ք. Մադրիդում կայանալիք Չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղի մասնակցության 2 տոմս և 4-օրյա (3 գիշեր) հանգստի փաթեթ 2 անձի համար (3* կամ բարձր հյուրանոց և ավիատոմս) («Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ հոգում է միայն նշված ծախսերը)

3.7.2 երկրորդ և երրորդ հորիզոնականը զբաղեցրած Թիմերին իրենց կողմից www.myuefacard.am հարթակում գրանցման ժամանակ ընտրված «Երկրպագած ֆուտբոլային ակումբի» մասնակցությամբ վերջինիս խաղադաշտում կայանալիք 2019-2020թթ-ի չեմպիոնների լիգայի մրցաշրջանի առաջին խաղի 2 տոմս և 4-օրյա (3 գիշեր) հանգստի փաթեթ 2 անձի համար (3* կամ բարձր հյուրանոց և ավիատոմս) («Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ հոգում է միայն նշված ծախսերը): Տվյալ ֆուտբոլային ակումբը 2019-2020թթ չեմպիոնների լիգայի մրցաշրջանին չներառվելու դեպքում Թիմը հնարավորություն ունի ընտրելու 2019-2020թթ չեմպիոնների լիգային մասնակցող որևէ այլ ակումբի խաղադաշտում կայանալիք առաջին խաղի 2 տոմս և 4-օրյա (3 գիշեր) հանգստի փաթեթ 2 անձի համար (3* կամ բարձր հյուրանոց և ավիատոմս) («Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ հոգում է միայն նշված ծախսերը):

3.8 Արշավը կամփոփվի մինչև սույն թվականի մայիսի 5-ը ներառյալ և կիրապարակվի սույն թվականի մայիսի 5-ից 10-ը ներառյալ www.myuefacard.am հարթակում:

3.9 Առաջին հորիզոնականի պարզևատրումն իրականացնել մինչև 2019թ-ի մայիսի 31-ը ներառյալ: 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած Թիմերի պարզևատրումներն իրականացնել 2019-2020թթ-ի չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղերի մեկնարկի ժամանակացույցի պաշտոնական հրապարակումից հետո:

3.10 Առաջին երեք հորիզոնականը զբաղեցրած Թիմերի պարզևատրման ժամանակ առկա է Թիմի 1 անդամի փոփոխության հնարավորություն: Հաղթող Թիմին դեսպանատան/հյուպատոսության կողմից արտոնագրի (վիզայի) չտրամադրման դեպքում Կազմակերպչի կողմից կարող է սահմանվել այլ մրցանակ կամ 400,000 ՀՀ դրամ փոխհատուցում յուրաքանչյուր Քարտապանին:

3.11 Եթե միավորների նույն քանակով երկու և ավելի Թիմեր հավակնեն հաղթողի կոչման, ապա հաղթողը կընտրվի հավելյալ առաջադրանքի արդյունքների հիման վրա:

3.12 Կազմակերպիչն իրավունք ունի Արշավի գործողության ընթացքում որակագրկել այն Թիմին և/կամ մասնակցին, ում կհամարեն Արշավի սահմանված Պայմաններին և Դրույթներին անհամապատասխան: Արդյունքում հնարավոր է, որ տվյալ Թիմը մրցանակային տեղ չզբաղեցնի: